# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2021 թվականի N 1589 - Լ

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) զբաղվածության կարգավորման 2022 թվականի պետական ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) զբաղվածության կարգավորման 2022 թվականի պետական ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) զբաղվածության կարգավորման 2022 թվականի պետական ծրագիրը՝ ըստ առանձին միջոցառումների, Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանված կարգով զբաղվածության կարգավորման 2022 թվականի պետական ծրագիրը և միջոցառումների ցանկը Հայաստանի Հանրապետության

2022 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ